

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 7. Պետական տուրքի գանձման օբյեկտները

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝

ա) դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

ա1) Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների համար.

ա2)

բ) **(կեղծ հանվել է 28.12.98 ՀՕ-277)**

գ) նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու համար.

դ) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, գրանցման հիման վրա վկայական, վկայականի կրկնօրինակ կամ տեղեկանք տրամադրելու, քաղաքացիական կացության ակտը վերականգնելու, քաղաքացիական կացության ակտում ուղղում, փոփոխություն կամ լրացում կատարելու, դրա հիման վրա վկայական կամ տեղեկանք տալու, ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանք տալու, Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերն ապոստիլով վավերացնելու համար.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար.

զ) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

է) պետական գրանցման համար.

~~ը) մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար.~~

~~թ) գյուտերի, արդյունաբերական դիզայնների, բույսերի սորտերի, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.~~

~~«ը) Մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն), մշակութային արժեքների ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն), մշակութային արժեքների՝ վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների՝ ժամանակավոր արտահանում և վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար.»:~~

ժ) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ժա) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար.

ժբ) սույն օրենքի 14.2-րդ հոդվածով, 19-րդ հոդվածի 15.4-րդ և 15.4.1-ին ենթակետերով, 19¹, 19², 19⁴, 19.7, 19.8 և 20 հոդվածներով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար.

ժգ) օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար.

ժդ) մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար.

Ժե) ֆիզիկական անձանց կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենան այլ ֆիզիկական անձանց օտարելու դեպքում տվյալ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման գրանցման համար, եթե ավտոմեքենան օտարվում է այն ձեռք բերելուց (սեփականության իրավունքի պետական գրանցումից) հետո՝ 365 օրվա ընթացքում: Սույն պարբերության իմաստով՝ ավտոմեքենա ձեռք բերել չի համարվում գույքի՝ ժառանգությամբ կամ նվիրատվությամբ ստացումը, իսկ օտարում է համարվում մեկ ֆիզիկական անձից այլ ֆիզիկական անձին ավտոմեքենայի սեփականության իրավունքի փոխանցումը՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի) կամ անհատույց:

~~Հոդված 17. Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը~~

~~(վերնագիրը փոփ. 17.11.17 ՀՕ-202 Ն)~~

-

~~Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝~~

~~ա) մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացությունը (թույլատրող փաստաթուղթ) տալու համար՝ բազային տուրքի հնգապատիկի չափով:~~

~~բ) (կեսրն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177 Ն)~~

~~գ) (կեսրն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177 Ն)~~

~~դ) (կեսրն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177 Ն)~~

~~ե) (կեսրն ուժը կորցրել է 06.12.04 ՀՕ-177 Ն)~~

~~զ) մշակութային արժեքներն արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացության (թույլատրող փաստաթղթի) կրկնօրինակը տալու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով:~~

~~Սույն հոդվածով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:~~

Հոդված 17. Մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն). մշակութային արժեքների ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն). մշակութային արժեքների՝ վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային

ընթացակարգի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների՝ ժամանակավոր արտահանում և վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքի դրույրաչափերը

1. Մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն), մշակութային արժեքների ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն), մշակութային արժեքների՝ վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների՝ ժամանակավոր արտահանում և վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույրաչափերով՝

1) Մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն), մշակութային արժեքների ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն), մշակութային արժեքների՝ վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների՝ ժամանակավոր արտահանում և վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով մեկ մշակութային արժեքի համար, իսկ երկու և ավելի մշակութային արժեքների դեպքում՝ բազային տուրքի տասնհինգապատիկի չափով.

2) Մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն), մշակութային արժեքների ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն), մշակութային արժեքների՝ վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների՝ ժամանակավոր արտահանում և վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) կրկնօրինակ տալու համար համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով:

2. Սույն հոդվածով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

~~Հոդված 27. Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքի գծով արտոնությունները~~

~~(վերնագիրը փոփ. 17.11.17 ՀՕ-202-Ն)~~

-

~~Մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝~~

~~ա) արտահանվող մշակութային արժեքների հեղինակը, իսկ հեղինակի մահից հետո նրա մահվան հաջորդ տարվա հունվարի 1-ից սկսած՝ 50 տարվա ընթացքում, նրա ժառանգները:~~

~~բ) Հայաստանի Հանրապետության, այլ պետությունների պետական պարգևներով, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների պարգևներով պարգևատրված անձինք՝ այդ պարգևների գծով՝ համապատասխան հիմնավորող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:~~

~~գ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված հեղինակի կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող հեղինակի խնամակալը կամ հոգաբարձուն:~~

~~դ) պետության և (կամ) համայնքների սեփականությունը հանդիսացող թանգարանները, արխիվները, գրադարանները, մշակութային արժեքների այլ պահոցներն իրենց հավաքածուներում (ֆոնդերում) մշտապես պահպանվող մշակութային արժեքները ժամանակավոր արտահանելիս օրենքով սահմանված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:~~

~~ե) երաժշտական համույթները, երաժիշտ կատարողները հյուրախաղերի կամ ուսումնառության մեկնելիս հայրենական կամ արտասահմանյան վարպետների ձեռքով պատրաստված ժամանակավոր արտահանվող երաժշտական գործիքների և նվագարանների համար՝ օրենքով սահմանված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:~~

~~զ) (ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)~~

~~Այն անձինք, ովքեր պետությանը նվիրաբերել են մշակութային արժեքներ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված են կամ ենթակա են գրանցման պետական պահպանական ցուցակներում կամ գրանցամատյաններում, նվիրաբերված յուրաքանչյուր արժեքի դիմաց ազատվում են~~

~~(մեկ անգամ) արտահանման իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքի վճարումից:~~

~~Հոդված 27 Մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն).
մշակութային արժեքների ժամանակավոր արտահանելու իրավունքի
եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության
հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն).
մշակութային արժեքների՝ վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային
ընթացակարգի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող
փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների՝
ժամանակավոր արտահանում և վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս
մաքսային ընթացակարգերի կիրառմամբ արտահանման եզրակացություն
(թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքի գծով
արտոնությունները~~

~~1. Մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն).
մշակութային արժեքների ժամանակավոր արտահանելու իրավունքի
եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության
հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն).
մշակութային արժեքների՝ վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս մաքսային
ընթացակարգի կիրառմամբ արտահանման եզրակացություն (թույլատրող
փաստաթուղթ), հանրագիտության և հնէաբանության հավաքածուների՝
ժամանակավոր արտահանում և վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս
մաքսային ընթացակարգերի կիրառմամբ արտահանման եզրակացություն
(թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքից ազատվում են՝~~

~~1) արտահանվող մշակութային արժեքների հեղինակը, իսկ հեղինակի մահից հետո
նրա մահվան հաջորդ տարվա հունվարի 1-ից սկսած՝ 50 տարվա ընթացքում, նրա
ժառանգները.~~

~~2) Հայաստանի Հանրապետության, այլ պետությունների պետական պարգևներով,
ինչպես նաև միջազգային կազմակերպությունների պարգևներով պարգևատրված
անձինք՝ այդ պարգևների գծով՝ համապատասխան հիմնավորող փաստաթուղթ
ներկայացնելու դեպքում.~~

~~3) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված
հեղինակի կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում
ունեցող հեղինակի խնամակարը կամ հոգաբարձուն.~~

~~4) պետության և (կամ) համայնքների սեփականությունը հանդիսացող
թանգարանները, արխիվները, գրադարանները, մշակութային արժեքների այլ
պահոցներն իրենց հավաքածուներում (ֆոնդերում) մշտապես պահպանվող~~

մշակութային արժեքները ժամանակակից արտահանելիս օրենքով սահմանված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

5) երաժշտական համույթները, երաժիշտ կատարողները հյուրախաղերի կամ ուսումնառության մեկնելիս հայրենական կամ արտասահմանյան վարպետների ձեռքով պատրաստված ժամանակակից արտահանվող երաժշտական գործիքների և նվագարանների համար՝ օրենքով սահմանված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

2. Այն անձինք, ովքեր պետությանը նվիրաբերել են մշակութային արժեքներ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված են կամ ենթակա են գրանցման պետական պահպանական ցուցակներում կամ գրանցամատյաններում, նվիրաբերված յուրաքանչյուր արժեքի դիմաց ազատվում են (մեկ անգամ) արտահանման իրավունքի լիցենզիա (եզրակացություն) և եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար պետական տուրքի վճարումից: